

# ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

### ՊԱՏԿԵՐԸ ՉԱՆԳԵՉՈՒՐՈՒՄ

(ըստ XIX դարի վերջի և XX դարի գրառումների)

Պատմական Հայաստանի Մեծ Հայքի Սյունիք (Չանգեզուրի ազգագրական շրջան) նահանգից գրառված ժողովրդական բանահյուսությունը բազմաժանր ու բազմաբնույթ է. հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, հանելուկներ, շուտասելուկներ, հորովելներ, աշխատանքային, օրորոցային, հարսանեկան, սգո երգեր, խաղիկներ, ջանգլուկումներ, որոնք պատմել են բանասացներ Հովհաննես Մկրտչյան-Չաքարյանը, Անուշ Լալայանը, Վարսենիկ Մանուկյանը, Գուրգեն Օրդյանը, Գուսան Աշոտը և այլք: Չանգեզուրի բանահյուսությունը գրառել են անվանի բանահավաքներ Սերո հանգադյանը, Միքայել Առաքելյանը, Մուշեղ Գևորգյանը, Չարեհ Տեր-Մինասյանը, Արտաշես Նազինյանի գլխավորած բանահյուսական խմբարշավի անդամները: Այդ նյութերում հիմնականում լուսաբանված են բանասացների ապրած միջավայրը, տարիքը, նյութերի գրառման վայրը, ծագման հայրենիքը, գրառման ժամանակը և բնագրերի կենցաղավարման հետ առնչվող այլ հանգամանքներ: Չանգեզուրից գրառված բանահյուսական ժառանգությունը թե՛ տպագիր, թե՛ անտիպ ժանրերով հանդիսանում է մեր ժողովրդի բանավոր ավանդության անբավ հարստության անքակտելի մասը:

**Բանալի բառեր՝** Չանգեզուր, բանահյուսություն, բանասաց, բանահավաք, խմբարշավ, հեքիաթ, առասպել:

Չանգեզուրից գրառված բանահյուսության մեծ մասը ձեռագիր վիճակում խմբավորված է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում<sup>1</sup>, մասամբ տպագրվել են առանձին ժանրային համահավաք ժողովածուներում<sup>2</sup>: Դեռևս XIX դարի 80-ական թվականներին Կովկասյան ուսումնական շրջանի վարչությունը մանրակրկիտ մշակված ուղեցույցներով կրթության ոլորտի աշխատակիցներին հանձնարարել է բազմակողմանիորեն նկարագրել տարածաշրջանի բնակավայրերի և էթնիկ խմբերի անցյալ ու ներկա կենսընթացի փոփոխությունները՝ ուշադրություն դարձնելով ժողովրդական բանահյուսության գրառմանը: Հավաքված նյութերը լույս են տեսել վարչության հրատարակած հատորներում: Մասնավորապես ուշագրավ է Արծվանիկ գյուղի դպրոցի ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնազարյանի հողվածը՝ Չանգեզուրի հայերի հավատալիքների մասին՝ տարածաշրջանում կենցաղա-

<sup>1</sup> Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ՀԱԻԲԱ):

<sup>2</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. VII, Երևան, 1979, էջ 395-671; Ա. Դանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 13-14, 49-50, 55-57, 92-93, 149, 169-172, 204-205, 230-233, 261-263, 285, 295, 322-323:

վարող անեկդոտներով, անեծք-օրհնանքներով և այլ բանահյուսական նյութերով հանդերձ<sup>1</sup>:

Չանգեզուրի ժողովրդագիտական նյութերի համակարգված հավաքումը շարունակել է վաստակաշատ բանահավաք Երվանդ Լալայանը, որ իր գիտակազմակերպչական ջանքերի շնորհիվ կարողացել է համախմբել անվանի մտավորականներին ու գավառական գրագետներին և բավականաչափ նյութ գրառել Սիսիանի ու Չանգեզուրի ժողովրդական կենցաղի ու բանահուսական մշակույթի մասին, որոնք հետագայում լույս են տեսել «Ազգագրական հանդեսի» Գ և Դ հատորներում<sup>2</sup>: 1920-30-ական թվականներին Չանգեզուրի հասարակական ու մասնավոր կենցաղին վերաբերող հարուստ ազգագրական նյութ է հավաքել Ստեփան Լիսիցյանը<sup>3</sup>:

1967թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (այսուհետև՝ ՀԱԻ) գիտաշխատողներից կազմված Չանգեզուրի բանահյուսական խմբարշավը (ղեկավար՝ Արտաշես Նազինյան, անդամներ՝ Սարգիս Հարությունյան, Ժենյա Խաչատրյան, Վեներա Սահակյան), մեկնել է Չանգեզուր (Գորիս քաղաք, Գորիսի շրջանի Վերիշեն, Խնձորեսկ, Քարահունջ, Սիսիանի շրջանի Շաղաթ, Անգեղակոթ գյուղերը)՝ գրառելու տարածաշրջանի բանահյուսական մշակույթը:

Չանգեզուրից գրառված հեքիաթները (74 միավոր), ներառյալ նաև «Հավելվածում» գետեղված Մեղրիի և Սիսիանի հեքիաթները տպագրել են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության VII հատորում<sup>4</sup>: Հատորի ասացողների ու բանահավաքների սեռային պատկանելությունն ու թվական կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում. ասացողներից 21-ը տղամարդ են, 6-ը՝ կին: Հինգ բանահավաքներից միայն մեկն է կին՝ Վեներա Սահակյան: Հեքիաթները գրի են առել Միքայել Առաքելյանը՝ 16 միավոր, Սերո Խանգադյանը՝ 22, Մուշեղ Գևորգյանը՝ 10, Արտաշես Նազինյանը և Վեներա Սահակյանը՝ 6 միավոր (Սիսիանից):

«Մեղրիի և Սիսիանի հեքիաթները գետեղված են հատորի «Հավելվածում», որովհետև այդ շրջանները թեև տերիտորիալ առումով Չանգեզուրի մեջ են մտնում, բայց լեզվով-բարբառով և ազգագրական հատկանիշներով զանազանվում են»<sup>5</sup>: Մեղրիի հեքիաթները գրի է առել Չարեհ Տեր-Մինասյանը 1963-1964 թվականներին Երևանում՝ վերհիշելով իր հորաքույրների՝ Եղիսաբեթի, Շողակաթի և հորեղբոր աղջկա՝ Փեփրոնե Տեր-Մինասյանի պատմածները: Բանահավաքը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև հայրենի գյուղի միջավայրի, մեղրեցիների կենցաղի ու հեքիաթների կենցաղավարման հանգամանքների վերաբերյալ:

Չանգեզուրի բանահյուսական խմբարշավի ընթացքում բանագետ Արտաշես Նազինյանը 11 հեքիաթ է գրառել Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ 57-ամյա Գուրգեն Օրդյանից: Սյունիքի հեքիաթասացներն առանց բացառու-

1 Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), Тифлис, 1904, Выпуск XXXIV, Отдел III, с. 91-124.

2 Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 105-272; Ազգագրական հանդես, գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 7-116:

3 Լիսիցյան Ս., Չանգեզուրի հայերը, Երևան, 1969, 334 էջ:

4 ՀԺՀ, հ. VII, էջ 395-671: Հատորն ընդգրկում է 246 միավոր հեքիաթ, որից 172-ը գրառված է Արցախից, 74-ը՝ Սյունիքից:

5 ՀԺՀ, հ. VII, էջ 675:

յան բնիկներ են (Չանգեգուր, Մեդրի, Սիսիան, Խնձորեսկ, Յայջի, Շինուհար, Տեդ, Խանաձախ, Քարաշեն, Վերիշեն, Գորիս, Շաղաթ): Նրանց մասնագիտական կազմը բազմաշերտ է՝ արհեստավորներ, հողագործներ, աշուղներ, երաժիշտներ և այլն. նրանք օժտված են հեքիաթային սյուժեների ու մոտիվների լայն իմացությամբ:

Ցուցանշական են խմբարշավի գրառած նյութերը՝ հիվանդության և բուժման առասպելային, բուժման կենսաֆիզիկական, բուսական և կենդանական ծագմամբ դեղանյութերի կիրառությունների մասին, որոնք ընդհանրություններ են դրսևորում Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառած նույնանման դիպաշարերի համատեքստում:

Այդ առակատիպ հեքիաթ-գրույցների մի խումբը առնչվում է միջնադարյան առասպելական բժիշկ և իմաստուն Լոխմանի գործունեությանը և հայտնի է նրա անունով՝ «Բժիշկ Լոխման», «Լողմա հեքիմ», «Լողմանին դարդուկա կյամ» և այլն: Դրանց մի խումբն էլ առնչվում է այլ անուններով հայտնի կամ պարզապես անանուն բժիշկ-իմաստունների գործունեությանը՝ «Դալի Սելիմ», «Ճուկո և Ճեյրան», «Շահ Մարան», «Չոբանա Նաղը», և այլն<sup>1</sup>: Խմբարշավի նյութերում իմաստուն բժիշկը անանուն է, բայց բանահյուսական դիպաշարերի ուսումնասիրությամբ պարզվում է, որ խոսքը նույն բժշկապետ Լոխմանի մասին է: Խմբարշավի գրառած «Օձի թույնը»<sup>2</sup>, «Բժիշկն ու հիվանդը»<sup>3</sup> դիպաշարերում բժիշկը հիվանդ մարդուն ապրելու ընդամենը մի քանի օր է տալիս, ճիշտ այնպես, ինչպես Արցախի Դաշբուկաղ գյուղից գրառված «Դարդեն Նհետ դարմանն էլ կա»<sup>4</sup>, Կարինից գրառված «Ախչիկն ու օձը»<sup>5</sup>, Տուրուբերան-Մուշից գրառված «Բոր եզը»<sup>6</sup>, Արցախի Տումի գյուղից գրառված «Լողմանն ու հասարակ մարթը»<sup>7</sup> առակատիպ-հեքիաթներում: Լոխմանը զննում է հիվանդին. «Մին ռեցեպտ ա կյիրում, թա՛ քյինա, մինչև մին շեբաթը մըռնելու ըս»<sup>8</sup>: Մտահոգված մարդը, որ էլ ոչինչ չուներ փրկելու՝ սար ու ձոր է ընկնում և քաղցելով՝ չոբանից կաթ է խնդրում: Չոբանը մի սև ոչխար է բռնում և հիվանդի խնդրանքով կթում է գետնին ընկած մարդկային գանգի («կարկաժ») մեջ, որտեղ փսխել էր օձը [տարբերակներում՝ գանգի փոխարեն՝ կրիայի կիսագնդաձև գրահ կամ անձրևաջրից քարի վրա գոյացած կլոր փոս («կուռուճիկ»)<sup>9</sup>, կաթի փոխարեն մայիսյան մաքրագործող անձրևաջուր<sup>10</sup>, «ծմրուկի ճյուղ»<sup>11</sup>, առյուծի կաթ<sup>12</sup>] և այլն: Խմբարշավի գրառած «Օձի թույնը»<sup>13</sup> հեքիաթ-առակում հիվանդը դիմում է իր ծառային. «Դե որ պժշկություն չկա, արի տու ինձ էս քշեր տար իմ ոչխարի ար-

1 Այդ մասին մանրամասն տե՛ս **Թ. Հայրապետյան**, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան 2016, էջ 65:

2 ՀԱԻԲԱ, Չանգեգուրի բանահյուսական խմբարշավ (Սիսիան) FFVII: 6465-6469:

3 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVII: 6475-6477:

4 ՀժՀ, հ. VII, էջ 202:

5 ՀժՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 540-541:

6 ՀժՀ, հ. XIII, Երևան, 1985, էջ 161-177:

7 Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմել, ներածությունը գրել և ծանոթագրել են **Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը**, Երևան, 2004, էջ 156-158:

8 Նույն տեղում, էջ 157:

9 Բաքվի հայոց բանահյուսությունը, էջ 157:

10 ՀժՀ, հ. VII, էջ 202:

11 Նույն տեղում, էջ 171:

12 ՀժՀ, հ. XIII, էջ 172:

13 ՀԱԻԲԱ, Չանգեգուրի բանահյուսական խմբարշավ, FFVII: 6465-6469:

խաջը (փարախ) թող քիչերը վերջին անգամ իմ ոչխարների մոտ քնեմ, որ մեռնելու եմ»<sup>1</sup>: Հիվանդը պատվիրում է, որ սև ոչխարի կաթից մածուն պատրաստեն իր համար: «Կշերվա մի ժամանակ, ծառան զարթուն էր, տեսավ, որ մի օձ եկավ, մածունը կերավ, էլի հետ տվեց ամանի մեջ: Ծառան էս պանը տեսավ, մտածեց. «Լավ էլավ, թույնավորեց, թող աղան ուտի, մեռնի: Ի՞նչ ա, ես էլ շատ տանջվում եմ»<sup>2</sup>: Փաստորեն անբուժելի հիվանդը փրկվում է սև ոչխարի կաթից մերած մածունով, որի մեջ իր թույնն էր թափել օձը: Իսկ «Բժիշկն ու հիվանդը»<sup>3</sup> դիպաշարում հիվանդին փրկում է կաղամբը («հում քյալամ»), որի օգտակար հատկությունները լայնորեն տարածված են ժողովրդական բժշկության մեջ:

Չանգեզուրի ժողովրդական բանահյուսության գրառումները ժամանակագրական երեք շրջափուլ են ներկայացնում՝ 1936-1947թթ., 1963-1964թթ., 1967-1972թթ.:

Տարածաշրջանից գրառված ժողովրդական նյութերի գերակշիռ մասը (շուրջ 1500 միավոր)<sup>4</sup> պատկանում է Նախկին բանահավաք, խորհրդահայ նշանավոր արձակագիր Սերո Խանգաղյանի գրչին՝ կատարված 1936-1947 թվականներին: ՀԺՀ VII հատորում լույս է տեսել Սերո Խանգաղյանի 11 բանասացներից գրառած 22 հեքիաթ, որոնցից միայն մեկն էր կին բանասաց (Անուշ Լալայան, ծագումով Խանաձախ գյուղից, 63 տարեկան, պատմել է «Կտրիչ տղան»<sup>5</sup>, «Թաքավորի տղան»<sup>6</sup> հեքիաթները, որոնք լսել է հորից՝ Մինասից): Ս. Խանգաղյանն իր գրառումներին կցած ծանոթագրություններից մեկում դիտարկում է վիպական բանահյուսության տարբեր ժանրերի՝ Էպոսի ու հեքիաթի համանման սյուժեների ու մոտիվների աղերսները. ««Կտրիչ տղան» հեքիաթը նման է «Սասնա ծռեր» Էպոսի վարիանտներից մի քանիսին... Ծովի Ջալալ, Խաթուն խանում, ծիու ծովից հանելը, խորթ հոր պատմությունը և այլն՝ նմանություններ են Էպոսին»<sup>7</sup>:

«Կտրիչ տղան» հեքիաթի սյուժեն համապատասխանում է Արևել-Թումիսոն-Ութերի «Հեքիաթների տիպերի միջազգային համացույցի» 552 թվահամարին<sup>8</sup> և շարունակում է խորքային ընդհանրություններ դրսևորել «Սասնա ծռերի» տարբեր ճյուղերի հետ. «Կտրիչը ըրագումը իւրան հորն ա տեսնում, հերն ասում ա.-Վերթի, ծովի Ջալալ ծին հետա կոխկիտ, եր կաց կոխկիտ մեծ քարին տական ընդա յիհար-ջիլավը տուս կալ, տիր յիրան, ջիլավը ըռեխը քցի, ևստի, ըշտեղ օգես, կտանի հըսցնի»<sup>9</sup>:

«Սասնա ծռերի» հետ որոշ աղերսներ ունի նաև Չարեհ Տեր-Մինասյանի Մեղրիից գրառած «Ուսկե խննձճրճն նաղըը»<sup>10</sup> հեքիաթը, որտեղ պառա-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, FFVII: 6475-6477:

4 ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII: 4649-6141:

5 ՀԺՀ, հ. VII, էջ 411-416: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII:6101-6118:

6 ՀԺՀ, հ. VII, էջ 417-424: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII:6119-6141:

7 ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII:6099:

8 **H.-J. Uther.** The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, p. 322.

9 ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII:6099:

10 ՀԺՀ, հ. VII, էջ 585-597: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Չարեհ Տեր-Մինասյանի ֆոնդ, FFIV:1929-1954:

վը հերոսին պատմում է, որ ջրարգել վիշապի պատճառով երկիրը ծարավի է մատնվել: Պառավն ասում է. «Հես է տասը տարեվ ի մին տըսներկու գըլխան է վիշապ նըստած ա մեր ջրի գծը, մեզ ջճըր չի նա, հու հոր խընդրիս ի ջճըր տա- նի մետիլ մին ախչիկ տա: Մեր քաղաքամը ալ ախչիկ չի մնացալ, աճաճըր ալ մեր թաքավորը ծըն է մին ճարը մադար ախչիկի տընըլասկան ա տաճ անդճըր, հոր ջճըր վիր առի, թաճ չէ գորքը ծարավ կուտուրվիլ ի»<sup>1</sup>:

Վերոհիշյալ հեքիաթի հերոսը խանչալի մի հարվածով կտրում է տասներկու գլխանի վիշապի ինը գլուխները, և այդ ծանրությունը քարշ չտալու համար վերջինիս տասներկու լեզուները կտրելով՝ պահում է թաշկինակի մեջ:

Հնագույն պատկերացումների համաձայն՝ հերոսի վարկը ժողովրդի աչքում բարձրանում է այն ժամանակ, երբ նա իբրև ապացույց բերում է իր զոհի մարմնի մի մասը՝ գլուխը, ծնոտը, ատամները, քիթը, ականջները<sup>2</sup>, մեզ հետաքրքրող նյութի պարագայում՝ վիշապի լեզուները՝ հեքիաթում<sup>3</sup> և Կոզբադի- նի ատամներն ու շրթուները՝ «Սասունցի Դավիթ» էպոսում<sup>4</sup>:

Թագավորի նազիրը, նենգափոխելով փաստերը, իբր ինքն է սպանել վիշապին, հրապարակում հավաքված ժողովրդին ի ցույց՝ շուռ է տալիս սայլը, որտեղից թափվում են վիշապի տասներկու գլուխները: Հենց այդ ժամանակ հայտնվում է վիշապասպան հերոսը և իրավամբ իր հարցն է ուղղում կեղծարարին. «Պա թդ վիշափուն լճըր չի օնի»<sup>5</sup>: Նազիրն իրեն չի կորցնում և պատասխանում է. «Վիշափը վիխելոց լճըրն կօլ ա տըվալ»<sup>5</sup>: Հեքիաթի հերոսը բացում է թաշկինակը և վիշապի տասներկու լեզուները, իբրև իրեղեն ապացույց, տեղադրում գլուխների մեջ: Նազիրն արժանի պատիժ է ստանում, իսկ տղան դառնում է թագավոր:

«Թաքավորի տղան» հեքիաթի տողատակում արված ձեռագիր գրառումից պարզ է դառնում, որ բանահավաք Ս. Խանգադյանը ծանոթ է նաև տվյալ հեքիաթի միջազգային՝ մասնավորապես՝ հնդկական զուգահեռին<sup>6</sup>: Իր հավաքած հեքիաթների գրառման տեղի և հանգամանքների մասին բանահավաքը տեղեկություններ չի թողել, բացառությամբ վերոհիշյալ երկու հեքիաթների և Հովհաննես Մկրտչյան-Չաքարյանի պատմած «Քաջանց թագավոր»<sup>7</sup> ու «Բեյբուբե և Փարի»<sup>8</sup> հեքիաթների, որոնք գրի է առել Գորիսում: Մնացած տասը՝ տղամարդ բանասացներ են, որոնցից միայն երկուսի՝ Հովհաննես Մկրտչյան-Չաքարյանի (73 տ.) և Գուրգեն Օրդյանի (28տ.) տարիքի մասին է նշում բանահավաքը: Մյուս ութ բանասացների ոչ միայն տարիքը, այլև հեքիաթների

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 590:

<sup>2</sup> **Լալայեան Ե.**, Ծիսական կարգերը հայոց մեջ // Ազգագրական հանդես, XXI գիրք, Թիֆլիս, 1911, էջ 179-181: Հայ մատենագրության մեջ ևս տեղեկություններ կան նմանատիպ փաստերի վերաբերյալ (Փառատոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, Հինգերորդ դպրություն, գլուխ Դ, էջ 305, գլուխ Ե, էջ 309, գլուխ Զ, էջ 315, գլուխ ԽԳ, էջ 387, Հովհան Մամիկոնյան, Տարոնի Պատմություն, աշխատասիրությամբ՝ Վ. Վարդանյանի, Երևան, 1989, Պատճեն երկրորդ, էջ 89, Պատճեն երրորդ, էջ 99):

<sup>3</sup> ՀԺՀ, հ. VII, էջ 591:

<sup>4</sup> Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, 1981, էջ 206:

<sup>5</sup> ՀԺՀ, հ. VII, էջ 592:

<sup>6</sup> ՀԱԻԲԱ, Ս. Խանգադյանի ֆոնդ, FFII:6119:

<sup>7</sup> ՀԺՀ, հ. VII, էջ 398-410: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանգադյանի ֆոնդ, FFII:5945-5995:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 468-482: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանգադյանի ֆոնդ, FFII:6019-6091:

գրառման վայրն անհայտ է: Ի դեպ, Սերո Խանգադյանի բանասացներից երկուսը՝ Գուսան Աշոտը (Աշոտ Դադայան- 3 հեքիաթ) և Աշուղ Աթան (6 հեքիաթ) ժողովրդի կողմից սիրված անուններ են: Ցավոք, վերջիններիս պատմած հեքիաթների գրառման վայրի և պատմելու պահին ասացողների տարիքի մասին ծանոթագրությունները ևս բացակայում են:

Վաղ տարիքից տատի՝ Նանախանում զիզայի պատմություններով տպավորված Ս. Խանգադյանը առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդական բառուբանի նկատմամբ: Այդ մասին է վկայում ՀԱԻ բանահյուսական արխիվում 1946թ մարտի 19-ին Ս. Խանգադյանի հայտնած հետևյալ մտահոգությունը. «Չանգեզուրի լեռներում դեռ պահպանվում են մեր հնադարյան ֆոլկլորի հրաշալի բեկորները, որոնց գրի առնելն անհրաժեշտ եմ համարում մոտակա տարիներին ավարտել, այլապես ուշ կլինի»<sup>1</sup>:

Ուսուցիչ եղած ժամանակ Ս. Խանգադյանը Յայջի, Վերիշեն, Խանաձախ գյուղերում ոչ միայն բազմաժանր բանահյուսական նյութեր է գրառել,<sup>2</sup> այլև ստեղծել է ժողովրդական հեքիաթների գրական լեզվով պատումներ՝ («Թագավորը, այգեպանն ու օձը»<sup>3</sup>, «Երկու եղբայրներ»<sup>4</sup>) և զանգեզուրյան բարքերն ու սովորությունները խտացնող ժողովածուներ՝ «Կարմիր շուշաններ»<sup>5</sup>, «Ավանդատուն»<sup>6</sup>, Ինչո՞ւ, Ինչո՞ւ»<sup>7</sup> և այլն:

Ս. Խանգադյանի հետպատերազմյան՝ 1946-1947թթ. գրառումներում գերիշխում են ռազմաճակատային զրոյցները, անեկոտները, մարշալներ Բադրամյանի, Ժուկովի, Խորհրդային Միության հերոս, ծագումով զանգեզուրցի Հունան Ավետիսյանի մասին վիպաառասպելական հորինվածքները, որդեկորույս մայրերի սգերգերը և պատերազմ ասնձագերծած Հիտլերին ուղղված բազում անեծքները<sup>8</sup>:

Սերո Խանգադյանի վերոնշյալ ֆոնդում<sup>9</sup> պահպանվում են մեծ թվով տեղագրական կամ ստուգաբանական, բացատրական, վարքաբանական ավանդություններ՝ Գրիգոր Տաթևացու, Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Վահրամ Որոտնեցու, Իշխան Առանի ճանապարհի, Եղնիկի բլրի, Ճղած քարի, Ճորա վընդատեղի, Քաշկառի, Հալիձորի, Չանգեզուրի, Գորիսի, Խնձորեսկի, Անդրա-նիկի, Նժդեհի, Շահ Աբասի, Լենկ-Թեմուրի, Հրսևըքարի, Տաթևի վերաբերյալ:

Ս. Խանգադյանի գրառած ավանդագրույցի համաձայն՝ «Հին ժամանակ Կյորիսից տիյեր եղել են վեղի միջի շինած տներ: Թուրքերը էտ տընըտեղերիտ ասալ են Գյավուրիստան, այսինքն՝ գյավուրների՝ հայ քրիստոնյաների տեղ: Էտ անունիցտ էլ առաջացալ ա Գյավրուս, Գյորուս, Գորիս»<sup>10</sup>:

Չանգեզուրը մաքառումներով և պատմական իրադարձություններով հա-

1 ՀԱԻԲԱ, Ս. Խանգադյանի ֆոնդ, FFII:5259:

2 ՀԱԻԲԱ, Նույն տեղում, FFII: 4655-4725, 4757-4761, 5053-5071, 4769-4773, 4847-4851, 4861-4875:

3 ՀԱԻԲԱ, Նույն տեղում, FFII:4907-4908:

4 ՀԱԻԲԱ, Նույն տեղում, FFII:4981-4987:

5 **Խանգադյան Ս.**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1968, 522 էջ:

6 **Խանգադյան Ս.**, Ավանդատուն, Երևան, 1986, 283 էջ:

7 **Խանգադյան Ս.**, Ինչո՞ւ, Ինչո՞ւ, Երևան, 1970, 158 էջ:

8 ՀԱԻԲԱ, Ս. Խանգադյանի ֆոնդ, FFII:5501-5503, 5505-5506, 5509-5533, 6413-6414:

9 ՀԱԻԲԱ, Նույն տեղում, FFII: 5305-5307, 5313-5323, 5407-5411, 5413-5419, 5424-5439, 5471-5479, 6223-6227:

10 Նույն տեղում, էջ 171:

րուստ բնաշխարհի է և պատահական չէ, որ ավանդապատումը Չանգեզուրում սիրված բանահյուսական ժանր է, քանի որ հնարավորություն է տալիս սրբացնելու ժողովրդի անկախության և ինքնության համար մարտնչող հերոսներին: Հնարավոր է, որ որոշ դեպքերում պատմությունն ու ավանդությունը համախոս լինեն, սակայն նախապես ասենք, որ ավանդությունը, մեծավ մասամբ, ժողովրդի վիպաառասպելական պատկերացումների արդյունք է, որը կարող է նաև իրականին խառնված մտացածին ու զգայական տեղեկություններ ու միջադեպեր հաղորդել: Չորրինակ՝ Գորիս և Չանգեզուր տեղանունների մասին բազում ավանդություններ կան, որոնք ժողովրդական ստուգաբանություններ լինելով հանդերձ, չեն կարող հավակնել պատմաաշխարհագրական, լեզվաբանական կամ աշխարհաքաղաքական այս կամ այն խնդրի լուծմանը: Սակայն չի բացառվում նաև, որ ժողովրդական ավանդությունը կարող է նպաստել լուծման ճիշտ բանալին գտնելուն:

Բանահյուսական տարբեր ժանրերով հարուստ է նաև ՀԱԻԲԱ-ի Արամ Մարգարյանի FFVIII ֆոնդը: Արամ Մարգարյանը գրառումներ է կատարել 1948-1972թթ.-ին բանասացներ՝ Բեգլար Միրզոյանից (Տաթև), Մաշինկա Մարգարյանից (Քաջարան), Միսիթար Ալեքսանյանից (Ղափան), Սերգեյ Խաչատրյանից (Ղափան), Ռոմիկ Ավետիսյանից (Ղափան), Լևոն Դանիելյանից (Խնձորենկ): Հեքիաթների մեծ մասը Արամ Մարգարյանը լսել է հորից՝ Արտեմ Գևորգյանից, բայց գրառել է 1972 թ.-ին Բաքվում՝ քրոջ՝ Ճաղկավարդ Գևորգյանի վերապատմությամբ: Հրաշապատում հեքիաթներից ուշագրավ են «Նախանձ քուվերքը»<sup>1</sup>, «Փեղա ծին»<sup>2</sup>, «Կեռթևուկ մրաքուրը»<sup>3</sup>, իսկ իրապատումներից՝ «Միամիտ հարսը»<sup>4</sup>, «Չաթուն հետըդ յեր կալ»<sup>5</sup>, «Կեղծ ճգնավերը»<sup>6</sup>, «Հույսը քրզերա տիր»<sup>7</sup> և այլն:

ՀԱԻ բանահյուսական արխիվում գերակշռող են բանահյուսության բաժնի նախկին գիտաշխատող, բանահավաք Միքայել Առաքելյանի գրառումները, որ նա կատարել է 1964 թվականին Գորիսում: Միքայել Առաքելյանը 16 հեքիաթ է գրառել յոթ բանասացներից, որոնց սեռատարիքային խմբերը բազմազան չեն: Գրառումները կատարվել են 70 և ավելի տարիք ունեցող տղամարդ բանասացներից: Նրանցից միայն երկուսը՝ Գուրգեն Ադամյանը (2 հեքիաթ) և Թևան Միրզոյանը (2 հեքիաթ) 54 տարեկան էին: Միայն 80-ամյա ասացող Վարդանի (1 հեքիաթ) ազգանունն է մնացել անհայտ: Բանահավաքի գրառումներում ներկայացված են հեքիաթի ժանրի տարատեսակները, պահպանված են ասացողների լեզվաբարբառային և ոճական յուրահատկությունները: Միքայել Առաքելյանի հավաքածուն բազմաժանր է՝ հեքիաթներ<sup>8</sup>, ավանդություններ<sup>9</sup>, առակներ<sup>10</sup>, աննկդոտներ<sup>11</sup>, հորովելներ<sup>12</sup> և այլն:

1 ՀԱԻԲԱ, Ա. Մարգարյանի ֆոնդ, FFVIII:7302-7309:

2 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:7180-7210:

3 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:6598-6599:

4 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:6610-6612:

5 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:6616-6617:

6 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:6632-6635:

7 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFVIII:6640-6642:

8 ՀԱԻԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ, FFV:8683-8845:

9 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFV:8847-8861:

10 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFV:8863-8867:

11 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFV: 8867-8868:

12 ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFV:8869-8870:

Չանգեզուրի հարուստ բանահյուսության մի զգալի մասը նախկին գինվորական Մուշեղ Գևորգյանի գրառումներն են, որ նա կատարել է 1967-1969 թթ.՝ վերհիշելով դեռևս 1917-1920թթ. որոշակի ասացողներից լսած նյութերը: Գորիսի շրջանից նա գրառել է 10 միավոր հեքիաթ. հեքիաթները գրանցել է չորս բանասացներից, որոնք ներկայացնում են սեռատարիքային հետևյալ խմբերը՝

1. Վարսենիկ Մանուկյան, 81 տարեկան (5 հեքիաթ)<sup>1</sup>:

2. Սուլթան Գևորգյան (Սուլթան-բաջի), 50 տարեկան (1 հեքիաթ՝ վերապատում բանահավաքի հիշողությամբ)<sup>2</sup>:

3. Գրիգոր Ավետյան, 77 տարեկան (3 հեքիաթ):

4. Սամվել Գևորգյան, տարիքն անհայտ (1 հեքիաթ):

Մուշեղ Գևորգյանը Չանգեզուրից գրառել է շուրջ 1600 միավոր բանահյուսական նյութ, մեծ թվով առակներ և անեկդոտներ<sup>3</sup>, ինչպես նաև կազմել է բարբառային բառերի բացատրական բառարան<sup>4</sup>, «Հիշողություններ ժամանակի իրադարձություններից. Անդրանիկ փաշայի գործունեությունը Գորիսում»<sup>5</sup>, որը գրառել է ասացող Ասատուր Տեր-Գևորգյանից, որ բանահավաք Մուշեղ Գևորգյանի հորեղբայրն էր և բանասաց Սուլթան Գևորգյանի (Սուլթան-բաջի) ամուսինը: Ակսել Բակունցը իր նշանավոր «Կյորեսը» սկսում էր այսպես. «Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես: Երրորդ անունը՝ Կորիս,- տալիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալա Ճատուրը, որը քաղաքում հռչակված էր որպես փիլիսոփա և հին գրքերի սիրահար»<sup>6</sup>: Բակունցի Քյալա Ճատուրը հենց ինքը Ասատուր Տեր-Գևորգյանն էր, որին մենք Ճատուր ամի էինք կոչում, -կարդում ենք բանահավաք Մուշեղ Գևորգյանի արխիվում<sup>7</sup>:

1999թ.-ից ցայսօր տողերիս հեղինակը շարունակում է գրառել Չանգեզուրում կենցաղավարող բանահյուսական նյութերը, գրանցում և վերլուծում տարածաժամանակային փոփոխություններով պայմանավորված տեղաշարժերի բնականոն գործընթացները<sup>8</sup>:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժինը վերջին անգամ Սյունիքում դաշտային հետախուզական աշխատանքներ է կատարել 1960-ական թվականներին, և բավական է նշել, որ 1970-ից մինչև 2009 թվականներին լույս

1 Վարսեն տատին ծնվել է 1888 թ. Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Իր իմացած հեքիաթների մեծ մասը մանկության տարիներին լսել է տատից՝ Շահանից և Նրա եղբայր Աղաջանից: Վարսենն իր լսած հեքիաթները պատմել է իր երեխաներին, հետո թոռներին և ծոռներին (ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ, FFV:6687-6698):

2 Բանասաց Սուլթան բաջին (1852-1945) գրագիտությունից զուրկ, բայց գեղեցկատես, շնորհալի, համարձակ ու ազդեցիկ կին էր, ով հաճախ էր աղ ու հացով դիմավորում Գորիս մտնող պատվավոր հյուրերին: Նա երեխաներ չի ունեցել, բայց ինամել է ավելի քան 17 մանկահասակ որբերի ու չքավորների: Նա հռչակավոր գորգագործ էր: Նրա գործած «Անիի ավերակներում Նստած սգավոր հայ կինը», «Հայր Աբրահամը զոհաբերում է իր միակ որդի Իսահակին» գորգերի հռչակը Չանգեզուրից շատ հեռու է գնացել, գովաբանվել հեռավոր ամերիկյան մամուլում (ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ, FFV:6543-6565):

3 ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV:6959-7011:

4 ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV:6675-6685:

5 ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV:6823-6847:

6 Բակունց Ա., Երկեր, Երևան, 1986, էջ 361:

7 ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV:6669-6671:

8 Հայրապետյան Թ., Դաշտային բանահյուսական նյութեր, Սյունիք, տետր №1, 1999-2016թթ.: **Հայրապետյան Թ.**, Սյունիքի իրաշապատում հեքիաթների և «Սասունցի Դավիթ» հերոսավեպի զուգահիշ մոտիվների համեմատության շուրջ (ըստ XX դարի 2-րդ կեսի գրառումների)//Սյունիքի հայագիտական հանդես, Գորիս, 2010, № 2, էջ 99-109:



տեսած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 26 հատորներից ոչ մեկը նվիրված չէ Սյունիքին: Այդ բացը լրացնելու նպատակով հրատարակության եմ պատրաստում «Հայ ազգագրության և բանահյուսության» հերթական՝ Սյունիքին նվիրված հատորը:

Հետաքրքիր է նկատել, որ համեմատաբար ուշ շրջանի գրառումներում նույնպես պահպանվում են պատմական այս կամ այն դեպքի կամ անձնավորության հետ կապված ժողովրդական պատկերացումներ, որոնք հանգում են դիպուկ ու անակնկալ լուծումների: «Վարթերը պուք չի տաք» ավանդության մեջ, երբ Լենկ-Թեմուրը արշավում է Պարսկաստանի վրա, պարսիկ մեծ բանաստեղծ Հաֆեզը աղ ու հացով և հպատակության խնդրանքով դիմավորում է նրան: «Լենկ Թեմուրը ասում ամ»:

- Տու հուկ ե՞ս:

- Ես Հաֆիզն եմ:

- Ես հուկ գիդամ, վեր տո՛ւ Հաֆիզն ես:

Հաֆիզն ասում ամ:

- Կանչի թռանըս, հըրըհարցում ըրա, իմ կիրածնես անկյիր գյուղում ամ, քրգետե կասե՞ս»:

Հաֆեզի թռնիկը՝ շատ փոքրիկ ու սիրուն մի աղջնակ, կանգնում է և հուզմունքով սկսում արտասանել. «Վարթերը պուք չի տաք...»<sup>1</sup>:

«Լենկ Թեմուրը եշում ամ, եշում, սերտը կըկըղում ամ, ասում ամ, յա՛վ Հաֆիզ, ես ծեր քըղաքեն վնաս չեմ տալ: Թա՛մ ես ըշխարքես մեծ տերն ու տիրակալն եմ, տո՛ւ էլ մեծ բանաստեղծն ես, Շիրազը քեզ եմ բաշխում»<sup>2</sup>:

Հայ ժողովրդական բանահյուսության դասակարգումն, ըստ տեղագրական և ազգագրական հատկանիշների, բխում է մեր ժողովրդի պատմական կյանքի որոշ հանգամանքներից: Բանահյուսական նյութերի խմբավորման այս սկզբունքի շնորհիվ ի հայտ են գալիս տվյալ խմբի, կոնկրետ դեպքում՝ Սյունիք-Չանգեզուրի բանավոր մշակույթը միավորող աշխարհագրական, լեզվաբարբառային, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, սովորությունները, կյանքի ու կենցաղի բնորոշ գծերը: Սյունիքից գրառված բանահյուսության գերակշիռ մասը հնագույն սյուժեներ են, որոնք պատկանում են ժանրի հնագույն տիպին և գալիս են հազարամյակների խորքից:

Չանգեզուրի բանահյուսությունը Հայաստանի տարբեր շրջաններից գրառված ազգային երկացանկի բաղկացուցիչ մասն է կազմում և մոտիվային բազմազան զուգահեռներով, վառ երևակայությամբ, էթնոմշակութային ինքնատիպ լուծումներով պատմաճանաչողական մեծ արժեք է ներկայացնում:

1 Թ. Հայրապետյանի Դաշտային բանահյուսական նյութեր, Սյունիք, 2011 թ., տետր № 1:  
2 Նույն տեղում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 105-272, տպ. Ս. Ռոտինեանցի, 400+80:
2. Ազգագրական հանդես, գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 7-116, տպ. Ս. Ռոտինեանցի և Կ. Մարտիրոսեանցի, 318 էջ +108 էջ:
3. Բակունց Ա., Երկեր, Երևան, 1986, «Սովետական գրող» հրատ., 671 էջ:
4. Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմել, ներածությունը գրել և ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը, Երևան, 2004, «Չանգակ-97», 377 էջ:
5. Լալայեան Ե., Ծիսական կարգերը հայոց մէջ // Ազգագրական հանդես, XXI գիրք, Թիֆլիս, 1911, էջ 179-181:
6. Լիսիցյան Ս., Չանգեզուրի հայերը, Երևան, 1969, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:
7. Խանգաղյան Ս., Երկերի ժողովածու հինգ հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1968, «Հայաստան» հրատ., 522 էջ:
- 8 Խանգաղյան Ս., Ավանդատուն, Երևան, 1986, «Սովետական գրող» հրատ., 283 էջ:
- 9 Խանգաղյան Ս., Ինչո՞ւ, ինչո՞ւ, Երևան, 1970, «Հայաստան» հրատ., 158 էջ:
10. Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ), հ. VII, Երևան, 1979, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 767 էջ:
11. Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ), հ. IX, Երևան, 1968, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 649 էջ:
12. Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ), հ. XIII, Երևան, 1985, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 616 էջ:
13. Հայրապետյան Թ., Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան 2016, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 462 էջ:
14. Հայրապետյան Թ., Սյունիքի հրաշապատում հեքիաթների և «Սասունցի Դավիթ» հերոսավեպի զուգադիր մոտիվների համեմատության շուրջ (ըստ XX դարի 2-րդ կեսի գրառումների) // Սյունիքի հայագիտական հանդես, Գորիս, 2010, № 2, էջ 99-109:
15. Հայրապետյան Թ., Դաշտային բանահյուսական նյութեր, Սյունիք, 2011թ., տետր № 1:
16. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (ՀԱԻԲԱ):
17. Հովհան Մամիկոնյան, Տարոնի Պատմություն, աշխատասիրությամբ՝ Վ. Վարդանյանի, Երևան, 1989, «խորհրդային գրող», 176 էջ:
18. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ+33 լուսանկար:
19. Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, Երևան, 1981, «Լույս» հրատ., 343 էջ:
20. Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, Երևանի համալսարանի հրատ., 455 էջ:
21. Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), Тифлис, 1904, Выпуск XXXIV, Отдел III, с. 91-124; Типографии Канцелярии Главноначальствующаго гражд. частию на Кавказ и К. Козловскаго.
22. H.-J. Uther. The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, p. 322.

**ТАМАР АЙРАПЕТЯН - ОБЗОР СОБИРАНИЯ И ИЗДАНИЯ ФОЛЬКЛОРНОГО МАТЕРИАЛА В ЗАНГЕЗУРЕ (на основе записей конца XIX и XX вв.)** - Фольклорный материал, собранный из Сюника (этнографический регион Зангезур), одного из провинций Великой Армении, многообразен и имеет следующую жанровую вариацию: сказки, легенды, беседы, пословицы и поговорки, проклятия и благословения, загадки, скороговорки, песни (рабочие, свадебные, скорбные, колыбельные, детские) и были сказаны такими народными сказителями как, Оганес Мкртчян-Закарян, Ануш Лалаян, Варсеник Манукян, Гурген Ордян, Гусан Ашот и др. Фольклорный материал Зангезура был собран известными фольклористами Микаел Аракеляном, Мушег Геворгяном, Заре Тер-Минасяном, и участниками фольклорной экспедиции во главе с Арташес Назиняном.

В этих произведениях в основном описываются окружающая среда, возраст сказителя, место и время записи материала, происхождение и другие детали и обстоятельства связанные с бытованием произведения. Фольклорное наследие, записанное из Зангезура – опубликованное и непечатное, во всем своем жанровом многообразии, является неиссякаемым наследием устной традиции нашего народа.

**Ключевые слова:** Зангезур, фольклор, рассказчик, собиратель, экспедиция, сказка, миф.

**TAMAR HAYRAPETYAN - THE OVERVIEW OF COLLECTION AND PUBLICATION OF FOLKLORE MATERIAL IN ZANGEZOUR (on the records of the end of the XIX and XX centuries)** - The folklore collected from the province of Syunik of the Kingdom of Armenia (Zangezour ethnographic region) varies in nature and genre: folktales, legends, proverbs and sayings, blessings and curses, riddles, tongue-twisters, nursery rhymes, variety of songs (ritual, labor, wedding, lullaby, mourning songs), that were told by such storytellers as Hovhannes Mkrтчyаn-Zaqaryan, Anoush Lalayan, Varsenik Manoukyan, Gurgен Ordyan, Gousan Ashot and others. The folklore of Zangezour was collected by prominent folklorist-collectors Sero Khanzadyan, Mikayel Arakelyan, Moushegh Gevorgyan, Zareh Ter-Minasyan, and members of folklore expedition campaigned by Artashes Nazinyan.

In these materials mainly the environment of storytellers, their age, place of the origin of the material, time and other circumstances related to the everyday use of the piece of folklore and people's life were indicated. The folklore material collected from Zangezour, either printed or unprinted genres, is considered to be a valuable and inseparable part of our people's oral tradition.

**Key words:** Zangezour, folklore, storyteller, collector, folklore expedition, folktale, myth.